ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/37440-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-903-27.08.2024-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք հետևյալը.

1. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ Նախագծի 1-ին հոդվածի «2018 թվականի մարտի 7-ի «Հանրային խորհրդի մասին» ՀՕ-144-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.» բառերը փոխարինել «Հանրային խորհրդի մասին» 2018 թվականի մարտի 7-ի ՀՕ-144-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.» բառերով:
2. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական և քրեական դատավարության օրենսգրքերով կիրառվում է «ռեաբիլիտացիոն հիմք» ձևակերպումը՝ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 11.10-րդ

հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «(ոչ ռեաբիլիտացիոն հանգամանքներով)» ձևակերպման մեջ «ռեաբիլիտացիոն հանգամանքներով» բառերը փոխարինել «ռեաբիլիտացնող հիմքերով» բառերով:

3. Նախագծում առկա տեխնիկական վրիպակը վերացնելու նպատակով՝ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 11.11-րդ հոդվածի 2-րդ մասի «սույն օրենքի 11.10-րդ հոդվածի» ձևակերպումից հետո առկա «մասի» բառը հանել:
4. Հիմք ընդունելով այն, որ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 11.12-րդ հոդվածի 1-ին մասի «Փաստահավաք հանձնաժողովի անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում:» ձևակերպման արդյունքում ստացվում է, որ Փաստահավաք հանձնաժողովը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմին՝ կարգավորումից հանել «այլ» բառը:
5. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգրքով կիրառվում է « ոչ ռեաբիլիտացնող» ձևակերպումը՝ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 11.16-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի «ոչ արդարացնող» բառերից հետո լրացնել «(ոչ ռեաբիլիտացնող)» բառերը:
6. Քանի որ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 11.16-րդ հոդվածի 3-րդ մասի հետևյալ՝ « Փաստահավաք հանձնաժողովի անդամի լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած՝ Հանրային խորհրդի նախագահի կողմից փաստն արձանագրելու և այդ մասին հայտարարությամբ հանդես գալու պահից:» ձևակերպումից պարզ չէ, թե երբ է Հանրային խորհրդի նախագահը հանդես գալու հայտարարությամբ առաջարկվում է «այդ մասին» բառերից հետո լրացնել «անհապաղ» բառը:
7. Քանի որ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 11.16-րդ հոդվածի 6-րդ մասի հետևյալ՝ «Փաստահավաք հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում սույն օրենքով սահմանված կարգով ընտրվում է Փաստահավաք հանձնաժողովի նոր անդամ:» դրույթի ձևակերպումից պարզ չէ թե Փաստահավաք հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու կամ դադարեցնելու դեպքում դրանից որքան ժամանակ հետո պետք է իրականցվի նոր անդամի ընտրությունը, ուստի

առաջարկվում է նշված հոդվածի 6-րդ մասի «սույն օրենքով սահմանված կարգով ընտրվում է Փաստահավաք հանձնաժողովի նոր անդամ:» բառերը փոխարինել «Փաստահավաք հանձնաժողովի նախագահը հնգօրյա ժամկետում դիմում է Հանրային խորհրդի նախագահին՝սույն օրենքով սահմանված կարգով Փաստահավաք հանձնաժողովի նոր անդամի ընտրություն կազմակերպելու համար: Փաստահավաք հանձնաժողովի նոր անդամի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է Փաստահավաք հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարումից կամ դադարեցումից հետո երկամսյա ժամկետում:» բառերով և նախադասությունով:

Հարգանքով՝ [redacted]

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ